ՀՏԴ 811.19:168.521

Հ.Ֆ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՈՒՀՈՒՄ

Դիտարկվում է տեխնիկական բուհում գիտատեխնիկական տերմինների կառուցվածքային առանձնահատկությունների ուսուցման մեթոդիկան: Ցույց է տրվում, որ տերմինների կառուցվածքային առանձնահատկությունները պայմանավորված են իրենց տերմինահամակարգերի ինչպես իմաստաբանական հատկանիշներով, այնպես էլ զարգացման ներքին և արտաքին գործոններով, տվյալ համակարգում տերմինների պատճառաբանվածությամբ: Այս իրողությունների՝ դիդակտիկայի սկզբունքներին համահունչ ուսուցումն ապահովում է նաև տերմինակառուցվածքի յուրացումը սովորողների կողմից:

Առանցքային բառեր. տերմինի իմաստաբանական հատկանիշներ, տերմինակերտման օրինաչափություններ, տերմինակառուցվածք, դիդակտիկայի սկզբունքներ:

Տերմինաբանություն թեման պոլիտեխնիկական բուհի լեզուների առարկայական ծրագրերում ներառված է իբրև բաժին, որի ուսուցման մեթոդաբանության քննությունն արդիական է՝ պայմանավորված հետևյալ իրողություններով.

1. Տերմինաբանության առաջացումը հասարակության՝ լայն առումով մշակույթի և հատկապես գիտության ու տեխնիկայի բոլոր բնագավառների զարգացման արդյունք է: Այսինքն՝ տերմինաբանությունը միջգիտական երևույթ է [1], և տերմինագիտության հիմունքների յուրացումը հավասարապես անհրաժեշտ է բարձրագույն կրթություն ստացող բոլոր մասնագետներին:

2. Ելնելով այն իրողությունից, որ մասնագիտական դասընթացների, իմա՛ նաև համապատասխան տերմինաբանության յուրացումը բակալավրական կրթական աստիճանում իրացվում է հիմնականում բարձր՝ երրորդ, չորրորդ կուրսերում, իսկ լեզուների ուսուցումն ավարտվում է երկրորդ կուրսում, խնդիր է դառնում տերմինաբանություն թեմայի ուսուցման մեթոդաբանության մշակումը: Հայոց լեզվի դասընթացում թեմայի ուսուցումը տարբերակված է նաև ըստ կրթական տարբեր աստիճանների՝ «Տերմինաբանություն» [2] (բակալավրական ծրագիր) և «Տերմինագիտության հիմունքներ» [1] (հետազոտողի ծրագիր): Հետևապես, թեմայի ներկայացումը ենթադրում է ինչպես դրա խորության և ծավալի, այնպես էլ դասավանդման մեթոդաբանության տարբերակումներ կրթական նշված աստիճաններում:

Աշխատանքում անդրադարձ է կատարվում տերմինների կառուցվածքային քննությանը: Տերմինների կառուցվածքի ուսումնասիրությամբ զբաղվում է կառուց-

վածքային տերմինագիտությունը, որի վերջնանպատակը մասնագիտական անվանումների՝ տերմինների առավել հարմար տարբերակների ստեղծումը կամ ընտրությունն է [1]: Ուստի տերմինաբանության լեզվական-կառուցվածքային օրինաչափությունների հստակեցումը, ի թիվս այլ նպատակների իրագործման, նաև ապագա մասնագետին իր բնագավառի տերմինների ուսուցման երաշխիք է: Այս առումով՝ բակալավրատում ուսուցանվող «Տերմինաբանություն» թեմայի մեթոդաբանության քննությունը ուղեցույց կարող է լինել լեզուների դասախոսներին:

Թեմայի դասավանդումն ըստ դիդակտիկայի սկզբունքների [3] նպատակահարմար է իրականացնել հետևյալ ընթացքով.

1. Ապահովելու համար ***գիտելիքի հաղորդման գիտականության սկզբունքը՝*** թեմայի ուսուցումը պետք է սկսել տերմինի սահմանումից՝ քայլ առ քայլ ցույց տալով նրա իմաստաբանական-կառուցվածքային հատկանիշների համակարգային բնույթը: Տերմինը ևս բառ է, սակայն հատուկ նշանակությամբ: Որպեսզի բակալավրատի առաջին կուրսի ուսանողն ըմբռնի այս իրողությունը, անհրաժեշտ է ակնառու կերպով ցույց տալ տերմինի և բառի նույնություններն ու տարբերությունները՝ վերլուծելով տերմիններն ըստ հնչյունական կազմի, ըստ իմաստաբանական-կառուցվածքային (բառագիտական) հատկանիշների, ըստ տեքստում դրանց գործածության (քերականական) առանձնահատկությունների: Այսինքն՝ տերմինաբանության ուսուցումը նպատակահարմար է իրականացնել՝ զուգադրելով նրա և առհասարակ բառապաշարի նույնություններն ու յուրահատկությունները [2]: Տերմինաբանության յուրացումը պետք է ընթանա բառագիտությունից տերմինագիտության հիմունքների և տերմինագիտության տեսական դրույթներից առանձին տերմինահամակարգերի կոնկրետ իրողությունների ուսուցման ճանապարհով, որով ապահովվում է ***հետևողականության սկզբունքով գիտելիքի՝ որպես ամբողջի և մասի, ընդհանուրի և մասնավորի փրամաբանական հաջորդականության հաղորդումը:*** Մի կողմից՝ բառապաշարի, մյուս կողմից՝ նրա մի մասի՝ տերմինաբանության նման համեմատությունը կապահովի նաև ***ուսուցման մատչելիության՝ պարզից դեպի բարդը, հայտնիից դեպի անհայտն ընթացող սկզբունքի*** կիրառումը, որով առավել դյուրին կդառնա ոչ միայն տերմինակառուցվածքի, այլև տերմինի և նրա սահմանման յուրացումը:

2. Տերմինագիտության տեսական հիմունքները, այդ թվում՝ նաև տերմինակառուցվածքը անհնար է մեկնաբանել առանձին, պատահական տերմինների օրինակներով, առավել ևս՝ ուսուցանել իր մասնագիտությունը դեռևս չյուրացրած ուսանողին. ի տարբերություն բառապաշարի մյուս իրողությունների՝ տերմիններին բնորոշ իմաստաբանական, կառուցվածքային, գործառական և մյուս հատկանիշները պայմանավորված են իրենց հասկացությունների համակարգերին բնորոշ իրողություններով. ինչպես տվյալ բնագավառի հասկացություններն են կազմում հա-

մակարգ՝ վերջինիս միկրոդաշտերով կամ միկրոհամակարգերով, ճիշտ նույն ձևով էլ այդ հասկացությունները նշանակող տերմիններն են համակարգվում համապատասխան միկրոդաշտերում կամ միկրոհամակարգերում [4]: Հետևաբար, տերմինների կառուցվածքային առանձնահատկությունների ուսուցումը պահանջում է, որ ապագա մասնագետը դրանք յուրացնի իր իսկ բնագավառի տերմինահամակարգի օրինակով, որով կապահովվի ըստ ***գիտակցական մոտեցման և ակտիվության սկզբունքի ուսուցումը***: Տերմինակառուցվածքը, անշուշտ, կարելի է ուսուցանել նաև ընդհանուր կամ հիմնարար առարկաների արդեն իսկ յուրացված տերմինաբանության (դիցուք՝ լեզվաբանության կամ մաթեմատիկայի տերմինահամակարգերի) օրինակով, ինչը ևս բխում է ***գիտելիքի հաղորդման մատչելիության սկզբունքից***: Ամեն դեպքում, իրենց մասնագիտական, թե արդեն ճանաչված որևէ այլ բնագավառի տերմինաբանությունն ուսումնասիրելիս սովորողները պետք է գիտակցեն դրա համակարգային բնույթը՝ ըմբռնելու համար «տերմինային համակարգայնություն» հասկացությունը. դա տերմինների՝ ըստ իրենց իմաստի և ձևի համակարգվելու հատկությունն է: Դրա գիտակցումն անհրաժեշտ է, որպեսզի ուսանողն ըմբռնի, թե ինչու են, օրինակ, որևէ բնագավառի բաղադրյալ և կապակցական տերմինների կազմում հաճախադեպ հանդես գալիս նույն արմատները, բառերը կամ ածանցները՝ որպես առանցքային բաղադրիչներ, որոնցով էլ առաջանում են տերմինային շարքեր և փնջեր տվյալ տերմինահամակարգում: Այսպես, լեզվաբանական տերմինահամակարգում զգալի թիվ են կազմում այն բաղադրյալ և կապակցական տերմինները, որոնց բաղադրիչներից են *լեզու, հնչյուն, բառ, իմաստ, ձև* տերմինները (*լեզվաընտանիք, լեզվամիավոր, լեզվամտածողություն, հնչյունախումբ, բաղադրյալ հնչյուն, հնչյունի բարձրություն, բառաձև, բառույթ, բառիմաստ, հոլովաձև, ձևաիմաստային միավոր, ձևույթ* և այլն) [1]: Նույն ձևով ուսանողը պետք է ըմբռնի, որ, օրինակ, մեքենագիտական-մեքենաշինական տերմինաբանության մեջ հաճախադեպ են *մեքենա, թրթռում, շարժ,- հան-* բառերն ու արմատները (*մեքենաշարժիչ, մեքենամաս, թրթռամեքենա, թրթռակայունարար, թրթռամշակում, շարժաբեր, շարժահաղորդ, շարժաթև, ակոսահան, ձևահան, ջրհան մեքենա* և այլն) [4]: Երկու տարբեր համակարգերի իրողությունների զուգադրումը ցույց է տալիս, որ տերմինային նշված շարքերն ու փնջերը ոչ միայն ըստ տերմինակառուցվածքի միմյանցից տարբերակում են այդ համակարգերը, այլև ապահովում են բերված արմատների ու բառերի՝ որպես տերմինների իմաստաբանական տեղն իրենց համակարգերում. ակնառու է դառնում նաև համակարգայնության առկայությունը տարբեր բնագավառների տերնինահամակարգերում [1]: Ուսուցման նման մոտեցմամբ ապահովվում է ***գիտելիքի ըստ համակարգայնության սկզբունքի հաղորդումը***:

3. Տերմինակազմության եղանակները և միջոցները պայմանավորված են տվյալ տերմինահամակարգի զարգացման ներքին և արտաքին գործոններով [4]:

Ներքին գործոններն են տերմինների կանոնակարգումը, միօրինակացումը և նորմավորումը, երբ տերմինի ձևը չի բավարարում (լիակատար չի արտահայտում նրա իմաստը), և փնտրվում է նոր, ավելի հարմար կառուցվածք [1]: Օրինակ, *колено трубы - խողովակի ծունկ-խողովակի արմունկ, люфт - խաղացք, խաղ-խաղ/ացք/-բացակ, налатка - 1.հարմարաբերում, 2.սարքաբերում-կարգաբերում, отбортовка - կողածալում - կողածռում, կողածռվածք, настройка - 1.լարում, լարք, 2.սարքում, սարքվածք - 1.լարք, /համա/լարում, 2.սարքաբերում-սարքաբերում, деформация - ձևափոխություն, դեֆորմացիա-դեֆորմացիա// ձևափոխություն, ձևախախտում-դեֆորմացիա.* այսօր այս վերջինն ընդունված է *դեֆորմացում* ձևով (հմմտ. հետևյալ երեք բառարանները՝ [5]):

Արտաքին գործոնները պայմանավորված են մի կողմից՝ հասարակության կյանքում կատարվող տեղաշարժերով, մյուս կողմից՝ գիտության տվյալ բնագավառի զարգացման առանձնահատկություններով: Ընդ որում՝ յուրաքանչյուր բնագավառի տերմինաբանության զարգացման արտաքին գործոնները տարբեր կարող են լինել: Օրինակ, մեքենագիտական-մեքենաշինական տերմինաբանության զարգացման արտաքին գործոններ են մեքենաների և մեխանիզմների մասին գիտության և տեխնիկայի, այլև դրանց արտադրության, ինչպես և նույն բնագավառին առնչվող բարձրագույն մասնագիտական կրթության զարգացումը [4], իսկ լեզվաբանական տերմինաբանության դեպքում զարգացման արտաքին գործոնը առհասարակ տվյալ հասարակության բազմակողմանի և բազմաբարդ կապերով պայմանավորված զարգացումն է: Մեքենագիտության և մեքենաշինության հասկացությունների իմաստաբանությամբ պայմանավորված՝ այս տերմինաբանության մեջ տերմինները հանդես են գալիս գործողությունների, նույն գործողությունները կատարող գործիքների և այդ երկուսի հատկանիշները նշող տերմինային փնջերով: Տերմինների գերակշիռ մասն այս համակարգում տերմինային փնջեր են, այսինքն՝ գլխաբառ տերմիններն իրենց ճյուղավորումներով, երբ գործողության անունից *(կտրում)* ածանցմամբ, բարդմամբ կամ տերմինային կապակցությամբ սերվում են դրա հատկանիշը ցույց տվող *(գերարագ կտրում, սկավառակով կտրում)* կամ նույնանուն գործիքները նշանակող *(կտրիչ, կտրիչակալ)* և վերջիններիս հատկանիշները ցույց տվող *(երկսայր կտրիչ, թասաձև կտրիչ, արագափոխ կտրիչակալ, բազմատեղ կտրիչակալ)* տերմինները [4]:

4. Ի տարբերություն համագործածական բառերի՝ տերմինների իմաստը գրեթե միշտ պատճառաբանված է: Եթե բառերը հաճախ ստեղծվում են ինքնաբուխ, ապա տերմինները կառուցվում են գիտակցաբար, կամ լեզվում եղած բառին գիտակցաբար տրվում է նոր՝ տերմինային իմաստ, այսինքն՝ բառը տերմինացվում է: Սա պայմանավորված է նրանով, որ գիտական օբյեկտը, որը նշանակվում է տերմինով, մտավոր-մասնագիտական գործունեության, գիտակցված գործընթացի

արդյունք է: Այս իրողության ըմբռնումը կօգնի ուսանողին՝ հասկանալու, թե ինչու են բաղադրյալ կամ կապակցական տերմինների բաղադրիչները (արմատները, ածանցները) իրար միացվում գիտակցաբար, այսինքն՝ դրանք ընտրվում են իրենց՝ տվյալ դեպքում անհրաժեշտ նշանակություններին համապատասխան: Օրինակ, ընտրություն է կատարվում, թե ըստ տվյալ իմաստների՝ որ դեպքում գործածել *-ային, որ դեպքում՝ -ական* և որ դեպքում՝ *-(ա)կոր* ածանցները, որոնք երեքն էլ հատկանիշ են ցույց տալիս, բայց ունեն իմաստային նրբերանգներ, օրինակ՝ *հարվածական-հարվածային, շարժիչավոր-շարժիչային* (հմմտ. նաև բառակազմության դեպքում՝ *դասարանային=դասարանական*, բայց՝ *տնային*, *տնական*):

Տերմինները պատճառաբանված են իրենց ոչ միայն ձևի, այլև իմաստի առումներով: Օրինակ, համագործածական *բռունցք* բառի *բուռ* արմատը մեզ համար այլևս պատճառաբանվող չէ, բայց *բռունցք* տերմինը պատճառաբանված է այնքանով, որ մեքենագիտության, մեքենաշինության մեջ, նաև մեխատրոնիկայում և ռոբոտ-մանիպուլյատորներում այն ցույց է տալիս մի առարկա, որը հիշեցնում է մարդկային բռունցքը և կարող է շարժում հաղորդել մի ուրիշ առարկայի: Այսինքն՝ *բռունցք* տերմինը պահպանել է *բռունցք* բառի ոչ միայն բառաձևը, այլև ինչ-որ չափով համագործածական շերտում դրա իմաստային յուրացվածության աստիճանը և հենց դրանով էլ պատճառաբանված է:

Որևէ կոնկրետ տերմինահամակարգի իմաստաբանական այս իրողությունների ուսուցումից հետո պետք է ներկայացնել նույն բնագավառի տերմիններն ըստ կառուցվածքի և կրկին շեշտել, որ թեև տերմինն իր նշանակությամբ հատուկ բառ է, սակայն հիմնականում համընկնում են տերմինի և բառի կազմության միջոցներն ու եղանակները: Իսկ դրանց տարբերությունները պայմանավորված են՝ ա) տերմինի՝ ոչ տերմինային բառային միավորներից ունեցած տարբերություններով, բ) տերմինակերտմանը ներկայացվող խիստ պահանջներով [1]:

Հայերենում տերմիններն ըստ կազմության ընդունվում են որպես միաբառ և տերմինային կապակցությամբ արտահայտված միավորներ: Միաբառ են պարզ կամ իբրև այդպիսիք ընդունվող, ածանցավոր և բարդ տերմինները: Տերմինային կապակցություններ են կազմում երկու և ավելի բառերի կամ բառերի ու տերմիններ-ի մի նոր՝ որպես տերմին վերամիավորված կապակցությունները, որոնք տերմինային տվյալ իմաստի համար պատրաստի և անտրոհելի են: Տերմիններն արտահայտվում են հիմնականում գոյականով, ածականով, դերբայներով, բայանուն գոյականներով: Օրինակ, մեքենագիտական-մեքենաշինական տերմիններից են.

պարզ (արմատական) տերմիններ. *այտ, անուր, բազուկ, գագաթ, դաստակ, եղան, երիթ, կոունկ, ճանկ, սեղան, քուղ* և այլն.

բաղադրյալ տերմիններ. *հեկադարձ-առաջընթաց, մեքենա-շարժիչ, բեռնամբարձ, մանրակարծրաչափ, գնդասեղաձև, տրամաչափարկում* և այլն.

դերբայով արտահայտված տերմիններ. *ամբողջագլոցած, գամաքանդված, ինքնայուղվող, խաչահատվող* և այլն.

գոյականի հոգնակի թվով արտահայտված տերմիններ. *մեքենաներ, մեխանիզմներ, թրթռումներ, տեխնոլոգիաներ, մանրամասներ:*

Ինչպես տեսնում ենք, պարզ տերմինները հիմնականում բառապաշարի համագործածական շերտի բառերն են, որոնք տերմինացել են: Բարդ տերմիններն ըստ կազմության վերլուծական և համադրական բարդություններ են: Վերլուծական կազմություններից մեքենագիտական-մեքենաշինական տերմինաբանության մեջ հանդիպում են հարադիր բարդություններ, իսկ համադրական կազմությունները կարող են լինել հոդակապով, անհոդակապ, ըստ բաղադրիչների քանակի՝ երկարմատ, եռարմատ, հազվադեպ՝ նաև քառարմատ: Գոյականի հոգնակի թվով արտահայտված տերմինները նշանակում են համապատասխան սարքերի կամ գործողությունների դասերը, ենթադասերը, տեսակները:

Միաբառ տերմինների մեջ պետք է առանձնացնել ածանցավոր տերմինները՝ նկատելով, որ առհասարակ տերմինակազմությանը մասնակցում են հայերենի ոչ բոլոր ածանցները, իսկ որևէ կոնկրետ տերմինահամակարգի տերմինների կերտմանը առավել հաճախ մասնակցում են որոշակի ածանցներ, որոնց գործածությունը մեծ չափով պայմանավորված է տվյալ տերմինահամակարգի զարգացման ներքին և արտաքին գործոններով, տերմինների համակարգային հատկանիշներով և պատճառաբանվածությամբ: Սա նշանակում է, որ տարբեր ածանցներ տարբեր հաճախությամբ և ինտենսիվությամբ կարող են հանդես գալ, օրինակ, լեզվաբանական, մեքենագիտական-մեքենաշինական տերմինահամակարգերում: Մեքենագիտական-մեքենաշինական տերմինաբանության մեջ առավել հաճախակի գործածվում են *-ում, -իչ, -ակ, -ոց, -(ա)վոր, -ություն,* ածանցները, որոնցից առաջինը կազմում է գործողության *(ակոսում, գամում, դարձում, մամլում, խարտում, սրում),* հաջորդ երեքը՝ գործիքի *(ակոսիչ, գամիչ, դարձակ, մամլակ, խարտոց, սրոց),* մյուսը՝ հատկանիշի *(ակոսավոր, գամավոր, թրթուրավոր),* վերջինը՝ և՛ գործողության *(ազդեցություն, դիմադրություն, կաթսայաշինություն),* և՛ հատկապես հատկանիշի նշանակությամբ *(կարծրություն, կիպություն, շարժունություն)* տերմիններ: Իսկ լեզվաբանական տերմինահամակարգում *-վոր, -ություն, -ում* ածանցներին *(բանավոր, գրավոր, բառագիտություն, հնչյունաբանություն, ածանցում, խոնարհում)* զուգահեռ առավել հաճախակի գործածվում են *–ական, -ային, -ույթ* ածանցները *(գոյական, պատճառական, բառային, վանկային, հնչույթ, ձևույթ):* Այսինքն՝ ածանցների գործածությունը ևս պայմանավորված է տվյալ տերմինահամակարգի իմաստաբանական հատկանիշներով [1]:

Մեքենագիտական-մեքենաշինական տերմինաբանության մեջ գերակշռում են տերմինային կապակցությունները, որոնք կարելի է վերլուծել ըստ՝ բաղա-

դրիչների քանակի, խոսքիմասային պատկանելության և շարահյուսական հարաբերությունների: Կապակցությունները կարող են լինել երկանդամ, եռանդամ, քառանդամ կառույցներ, իսկ հինգ և ավելի անդամներով կառույցները անհանձնարարելի են՝ գործածության առումով անհարմար լինելու պատճառով: Տերմինային կապակցությունները կազմվում են նյութական խոսքի մասերից գոյականի, ածականի, բայի (բայարմատի կամ դերբայի), այս տերմինաբանության մեջ՝ նաև կապ խոսքի մասի համադրություններով: Օրինակ՝ *շարժման կայունություն, հոլովակավոր առանցքակալ, անկյունով տեղակալված կափույր, բանող անվի ականոց, դիմադրություն ծռման դեպքում, կայունություն քերամաշման նկատմամբ* և այլն: Տերմինային կապակցություններում գերադաս և ստորադաս բաղադրիչները դրսևորում են որոշիչ-որոշյալի, հատկացուցիչ-հատկացյալի շարահյուսական կապ: Տերմինային այս բոլոր կառույցների՝ համագործածական շերտի բառերի վերլուծություններին զուգահեռ ներկայացումը *կապահովի* ***ուսուցումն ըստ ակնառության,*** ինչպես և ***գիտելիքի փիրապետման կայունության սկզբունքների,*** երբ նոր գիտելիքը հաղորդվում է նախորդ փուլում յուրացվածի համեմատությամբ:

Այսպիսով, տերմինակառուցվածքի ուսուցումը ցանկացած մասնագիտության դեպքում պահանջում է, որ տերմինաբանական իրողությունները ներկայացվեն՝ հաշվի առնելով տվյալ բնագավառի տերմինահամակարգի իմաստաբանական-համակարգային հատկանիշները, զարգացման ներքին և արտաքին գործոնները, տերմինների պատճառաբանվածությունն այդ համակարգում: Տվյալ մասնագիտական և որևէ այլ՝ ծանոթ բնագավառի տերմինների կառուցվածքային իրողությունների զուգադրումը, նաև բառագիտության հասկացությունների հետ դրանց ինտեգրումը՝ դիդակտիկայի սկզբունքներին համապատասխան, կնպաստեն ուսանողների կողմից տերմինակառուցվածքի համակողմանի և խոր ըմբռնմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Պետրոսյան Հ.Ց.,** Տերմինագիտության հիմունքներ. Դասագիրք, Ե., 2010:
2. **Պետրոսյան Հ.Ց.,** Հայերեն գիտատեխնիկական տերմինաբանություն. Ուս. ձեռնարկ, Ե., 2010:
3. **Ղույումչյան Գ.Ե.,** Մանկավարժություն. Դասագիրք 2 գրքով, Ե., 2005:
4. **Պետրոսյան Հ.Ց.,** Հայերեն մեքենագիտական և մեքենաշինական տերմինների իմաստաբանական-կառուցվածքային և գործառական վերլուծություն / Թեկն. ատենախոսություն, Ե., 2007, 157 էջ:
5. **Ախշարումով Ռ.Տ. և ուրիշ.,** Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարան, Ե., 1957: **Հացագործյան Զ.Ա. և ուրիշ.,** Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարան, Ե., 1988: **Սարգսյան Յու.Լ. և ուրիշ.,** Մեխանիզմների և մեքենաների տեսություն. Անգլերեն-հայերեն-ռուսերեն տերմինարան, Ե., 2009:

А.Ц. ПЕТРОСЯН

МЕТОДИКА ОБУЧЕНИЯ СТРУКТУРНЫМ ОСОБЕННОСТЯМ АРМЯНСКИХ НАУЧНО-ТЕХНИЧЕСКИХ ТЕРМИНОВ В ТЕХНИЧЕСКОМ ВУЗЕ

Рассматривается методика обучения структурным особенностям научно-технических терминов в техническом вузе. Показано, что структурные особенности терминов в каждой области обусловлены как семантическими свойствами их терминосистем, так и внутренними и внешними факторами развития терминов, их мотивацией в конкретной системе терминов. Обучение этим особенностям в соответствии с принципами дидактики обеспечивает освоение структур терминов со стороны учащихся.

Ключевые слова: семантические свойства термина, закономерности терминостроения, структура термина, принципы дидактики.

H.TS. PETROSYAN

METHODS OF TEACHING THE PECULIARITIES OF FORMING ARMENIAN SCIENTIFIC-TECHNICAL TERMS IN AN ENGINEERING HEE

Methods of teaching the structure of scientific and technical terms in an engineering HEE is considered. It is shown that the peculiarities of the term structures in each sphere depends on the semantic properties of their term systems, the internal and external factors of the term development, their motivation in their term systems. Teaching these facts in accordance with the didactics principles ensures the mastery of the term structures by the students.

Keywords: semantic properties, laws of term-building, term structure, didactics principles.

ՀՏԴ 81’366.593

Դ.Ռ. ԵՊԻՍԿՈՊՈՍՅԱՆ

ՀՈՐԴՈՐԻ ԿԱՐԳԻ ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐՆ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

Դիտարկվում են անգլերենում հորդորի կարգի հաղորդակցական-գործաբանական առանձնահատկությունները: Հորդորական բնույթ ունեցող նախադասությունների գործառական վերլուծությունը բացահայտում է անգլերենում հորդորի կարգին բնորոշ գործաբանական տարատեսակ դրսևորումներ:

Առանցքային բառեր. հորդորի կարգ, հրամայական նախադասություն, հորդորական նախադասություն, գործաբանական դրսևորում:

Ներածություն: Լեզուն՝ որպես հաղորդակցման միջոց, ոչ միայն կատարում է տեղեկատվական գործառույթ, այլ նաև ապահովում է մարդկանց համատեղ գործունեությունը: Մարդկային կենսակերպի կարևորագույն բաղադրիչի՝ հաղորդակցական գործունեության դրսևորումների ուսումնասիրությունը ժամանակակից լեզ-